ընտանիքին, այն եւս նրա Եւրոպական խմբին է պատկանում: «Հնչիւնաբանական տեսակէտից հայերէնը սլաւ–լիտվական ու ալբանական լեզուների թւում միջին տեղն է բռնում: Ինչ վերաբերում է բառապաշարին՝ հայերէնը, ինչպէս նաեւ փռիւգերէնը, աչքի զարնող նըմանութիւններ ունին յունարէնի հետ: Այս փաստերը հարկադրաբար մեզ այն եզրակացութեան են յանգեցնում, որ հայերը հնումը Եւրոպայում են ապրելիս եղել, այն էլ՝ յոյների եւ թրակիացիների նախահայրերին մօտիկ»:

Հայոց լեզուի հիմնական տարրը Հնդեւրոպական համարելով՝ Մարքվարտ ուրեմն Եւրոպական ճիւղի շարքում է դասում այն եւ ոչ թէ իրանական ճիւղի, այսինքն՝ պարսկերէնին մերձաւոր ազգակից, ինչպէս որ առաջ կարծում էին՝ հիմնուելով այն փաստի վրայ, որ հայերէնը պարունակում է իրանականից փոխառած բազմաթիւ բառեր:

Սրա հետ միասին Մարքվարտ ընդգծում է այն, որ հայոց լեզուի բառամթերքի մեծագոյն մասը ստուգաբանօրէն տակաւին պարզաբանուած չէ, որ՝ հայերէնը ունի նաեւ բազմաթիւ ուրիշ բառեր, ոչ–հնդեւրոպական լեզուներից առնուած: Իսկ եթէ, շարունակում է նա, մենք դիմելու լինինք մարդաբանութեան, այդ պարագային կը լսենք մի աւելի եւս անըսպասելի վճիռ: Այն, որ հայերը իրանց մարմնակազմով բնաւ կապ չունին իսկական Հնդեւրոպացիների հետ, որոնց նախնական տիպը Հիւսիսում է անվթար պահուել. աւելի շուտ նրանք նման են այն ցեղին, որ մենք պատկերացրած ենք տեսնում Փոքր Ասիայում եւ Հիւսիսային Սիւրիայում նախաքրիստոնէական երկրորդ եւ առաջին հազարամեակի առաջին կէսերից մնացած արձանների, ինչպէս նաեւ նախաքրիստոնէական երկրորդ հազարամեակի երկրորդ կիսուց պահուած եգիպտական գործերի վրայ:

Այդ ցեղն է, որ այժմ սովորական է Հեթիթ կամ Հաթ անուանել3):

Փոքր Ասիայի նախնական այս ազգաբնակութեան հետքերը դեռ այսօր էլ կարծում են գտած լինել այդ երկրամասի զանազան վայրերում (այսպէս՝ Ֆոն Լուշանը — հռչակաւոր ազգագրագէտ — նրանց հետքերը Լիւկիայում է գտնում):

Համաձայն այդ տեսութեան՝ հրեաներն էլ զուտ սեմական ժողովուրդ չեն, այլ սեմականացած Հեթիթներ:

Այսպիսով, լեզուաբանական եւ մարդաբանական հետազօտութեանց էական եզրակացութիւնն այն է, թէ հայերը գերազանցօրէն խառնուրդ ժողովուրդ են:

Հետաքրքրական է գիտնալ այժմ՝ ո՞րտեղ եւ ե՞րբ են նրանք այդպէս դարձել: Այդտեղ մեզ նորից Հեթիթները օգնութեան պիտի գան:

* * *

Յայտնի է, որ սրանից դեռ 30 տարի առաջ Մարբուրգի համալսարանի պրոֆէսոր անուանի արեւալագէտ (սեմագէտ) Պաուլ Ենզէնն (Paul Jensen) է իր մի մեծահատոր աշխատութեան մէջ, վերնագրուած «Հեթիթներ եւ Հայեր», առաջին անգամ պաշտպանել հայերի եւ Հեթիթների ցեղակցութիւնը:

Այդ տեսութիւնը բուռն քննադատութեան ենթարկուեց եւ աւելի շատ բացասողներ քան ընդունողներ ունեցաւ:

Հեթիթները, ինչպէս յայտնի է, նախաքրիստոնէական երկրորդ հազարամեակում մի շատ հզօր պետութիւն էին հիմնել Փոքր Ասիայում, և նա այն ժամանակները սարսափի մէջ էր պահում մինչեւ իսկ աւելի հնագոյն Բաբելոնի պետութիւնը: Արեւմուտքում նրա սահմանները հասնում էին մինչեւ Եգէական ափերը, հարաւ–արեւելքում յետագային նա մինչեւ Ասորիքի ներսերը հասաւ, մինչեւ իսկ յաջողապէս մրցութեան ելաւ Եգիպտոսի հետ՝ յանուն գերակայութեան:

Այդ հզօր պետութեան մայրաքաղաքն էր՝ Հաթի, որի աւերակներն էլ մնացած են մինչեւ օրս Փոքր Ասիայի Բողազ–Քէօյ վայրում — հին

---

3) Մարդաբանական նորագոյն հետազօտութիւնները պարզում են եւ այն տեսութիւնը, համաձայն որի հայերը (մարդաբանօրէն) ցեղակից են եւրոպական ալպեան ճիւղին, հայտնանը համարելով նրա նախնական հայրենիքը: Պ. Մ. Մինասեան «Հայրենիք»ի մէջ հանգամանօրէն կանգ է առել այդ տեսութեան վրայ: Նորերս լոյս են տեսել այդ խնդրով զերմաներէն աշխատութիւններ եւս: